

ՄԵՃՄՈՒՄ ԵՒ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pera, Taksim 65

Համբարսա իրի ճեժա եսանի ՉԱՐԵՆՊԻՉ ՎԵ
ՃՈՒՄԱ ԻՐԹԵՍԻ կիւմրերի ձեշր օրուներ:

ՆԻԻՍԻՍԻ
30 ՔԱՐԱ

مجموعه اخبار
تاکم افغانی قسم حادسی و سرحد

ԱՊՐԵՆԻ ՖԻՅԱԼԻՍՐԸ. = Իսթանպուլ իրին սենեկիկ 60 ղշ. = 6 ալըզը 35. = Թալիս իրին սենեկիկ 85 = 6 ալըզը 45 ղշ. արր = Մէժալիքի ճնէլալի իրին սենեկիկ 20 ֆր. արր = Բոսթա իւնըլիքի պիզէ պիտ տիր = 15 կիւնիւք նիւսիւք 10 բա տիր = Իււնիւք ՇԱՐԻՍԻՍԻՐԸ. = Իրին սահիֆէնիս արրաւ 5, 200ֆ վէ Յիւնիս սահիֆէնիս արրաւ 3, վէ Կիւնիս սահիֆէնիս պէնէր արրաւ 1 ղշ. արր = 2օգ տէֆա տէրճ իսիւնէք իւնիս արրաւ բաղարըզ օլուներ:

Ղաղթայա միւթէալիք խոսուսաթ իրին ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաւաթ ունա = Իտալիսանէ՝ Պէյոզլուստա ճաւաթի քէպիտէ Ն. 65:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԸ ԻՆՉ ՊԵՏԻՒ ՍՈՎՐԻՆ

Մեր եկեղեցական դասին այլեւայլ նիւթերու մէջ ունեցած խորունկ հմտութիւնը և մեծածաւալ զարգացումը ամէն մարդու ծանօթ է արդէն, և մենք այս բաներով իրաւունք ունինք յստիս պարծենալու, երբ զանազան առիթներու բերմամբ, կը մղուինք պահ մը բազմաառաջ զանազան եկեղեցականներու ուրիշ եկեղեցականներու հետ, որոնց վրայ մեր իրենց զարգացումը տեսակէտէն գերաւորւի առաւելութիւն մը ունին անուրաշախօրէն, Աւելորդ է անշուշտ չեղեթի զարգացումը որչափ ստիպողական ու անհրաժեշտ է եկեղեցականի մը համար, որ Աստուծոյ ներկայացուցիչը պիտի ըլլայ երկրիս վրայ, զարդելով Անոր խօսքերը, բացատրելով Անոր վարդապետութիւնները և ի հարկին՝ աստուածաբանութեան անսխալ ու պերճախօս փաստերը ի ձեռքին վիճաբանելով անանկներու հետ ալ, որոնք Գերագոյն Եկեղեցւոյ զոյգութիւնը կասկածի կ'ենթարկեն:

Ուրախալ է թէ՛ առանց ո՛րեք չափազանցութեան՝ մեր եկեղեցականներուն մէջ կարելի չէ բնաւ գտնել տգէտ մէկը, որ իր քարոզած վարդապետութիւններուն աստուածաբանութիւնը ուսումնասիրած չըլլայ խորապէս և որ չգիտայ զոնք մէկ երկու լեզու: Տգէտ աշխարհականներ ունենանք թերեւս մեր մէջ, սակայն բնաւ չունենք տգէտ եկեղեցական մը, ինչ որ կրնայ երեւակայութիւն թէ՛ որչափ միտաբան կան է ու որչափ արժանի ամէն պարծանքի: Մեր եկեղեցականները՝ ամէն ալ տըզայ հասակէն սկսեալ դպրոցի գրասենյակներ մաշեցուցած անձնաւորութիւններ են, որոնք վաճառէն դուրս ալ կը շարունակեն իրենց զարգացումը: Երբ անգամ մը ուրիշ եկեղեցականներու ընդհանուրին հմտութեանը տկարիկ մը նետելու ըլլանք, այն ատեն պիտի հաւոգուինք խորապէս մերկայանալով գերիվերութեան զարգացումի և կրթական դաստիարակութեան տեսակէտին, բանի, որոնք ժամանակակից եկեղեցականին համար անհրաժեշտ են՝ սկսած իրենց անհատական այս դասուն մէջ:

Մեր եկեղեցականները հմուտ են, զարգացած են, աստուածաբանութիւնը շուրջը պէս գիտեն, գրաբարի վարժապետներ են ամէն ալ, ինչպէս նաեւ ունին զեռնուրիշ շատ մը հմտութիւններ: Աստուծոյ լաւ: Սակայն, — ինչպէս որ անցեալները դիտել կուտար բարձրաստիճան եկեղեցական մը, — մեր եկեղեցականներէն շատեր այս գիտութիւնները լափած աստեղծութիւն են: Գիտակցաբար յաճախ մէկ կողմ կը դնեն ամենէն կարեւորը, և էականը, որ իրենց համար առաջին սովորելիք բանը պիտի ըլլար աստուածաբանութիւնը ետքը: Մինչ լատիններէն և յունարէնի այնչափ ուժ կուտան, ջանալով Ս. Յովհան Ոսկեբերանը և Ս. Օգոստինոսը իրենց բնագիրներէն կարդալ, — ազնիւ ջանք ու ազ-

նիւ բաղձանք, — միւս կողմէ սակայն բոլորովին բարձր տակ կը ձգեն օսման երկնքը ու ֆրանսերէնը, որոնցմէ առաջինը լատիններէնն ու հին յունարէնէն շատ առաջ պէտք է սովորին իբր սիրելի լեզուն այն երկրին, ուր ծնած են, անոնք են ու ապրած, և ուր պիտի շարունակեն իրենց կեանքը՝ վաճառէն դուրս դուրս ելլելէ ետք, իրենց փողովուրդին կրօնային հովիւ ու առաջնորդ ըլլալով, իսկ երկրորդը՝ այսինքն ֆրանսերէնը, զոր պարտաւոր են սովորել, իբր միջազգային լեզու մը, զոր ամէն մարդ կը խօսի և որ իրենց պէտք պիտի ըլլայ յետոյ չափազանց՝ իրենց առաջնորդի կամ վարդապետի կեանքին մէջ: Այս նիւթին վրայ խօսած ատենինս, կ'ըսել անցեալները լարելի անձ մը:

— Լատիններէնը և հին յունարէնը կերպովին յաջորդող պատուներն են. սակայն բուն կերպովը օսմաններն ու ֆրանսերէնէն է, զորս ամէն Հայ-Կաթողիկէ եկեղեցական պէտք է սովորի անպատճառ, առանց կերպովը ուսուցելու, ինչպէս մարդ կրնայ պտուղը ճաշակել:

Չափազանց իրաւացի է այս դիտողութիւնը: Լատիններէնը և հին յունարէնը կրթական շարժառիւթներ են, որոնք զարգացումի մը կատարելագործութեան սակայն նախ այդ զարգացումին առաջին հիմքը պէտք է դնել: Այն միջավայրին մէջ, ուր իրենց կրօնային կոչումին ծառայելով պիտի գործեն մեր եկեղեցականները, ո՛րք կը խօսի անշուշտ լատիններէն ու հին յունարէն, և այն եկեղեցականը, որ չէ սովորած անանկն առաջ իր երկրին լեզուն, շատ բան կը կորսնցնէ իր գործունէութեան տապաւնի մէջ:

Այն եկեղեցականները, որոնք ժամանակին չեն սովորած օսմաներէն ու ֆրանսերէն լեզուները հիմնովին, ետքէն այդ թերութիւնը անձեռն տեսնելով՝ հարկադրուած զգացած են իրենց լեզունը այդ լեզուները սովորելու, կարենալ ապրելու և կարենալ յարաբերութեան մէջ գտնուելու համար իրենց շուրջիներուն հետ: Արդ, լաւագոյն չէր ըլլար, որ իրենց ուսուցիչները ժամանակին՝ փոխանակ իրենց ազգային գլուխները լատիններէնի անվերջանալի ROSA-ROSEներով, լեցնելու, և սկսել լատիններէն օսմանէն առաջ կեանքի մէջ իրենց անհրաժեշտ եղած լեզուները, ետքի ձգելով վերջի վերջի ու Հոմերոսի թանկագին լեզուները, որոնց գեղեցկութիւնները և կարեւորութիւնը ես չեմ որ սակայն պիտի ուրանամ: Լատիններէնը ազուրէ է, բայց օսմաններէնը թէ՛ աղուոր է և թէ՛ մանաւանդ անհրաժեշտ, հին յունարէնը ներդաշնակ է և թէ՛ մանաւանդ կարեւոր ու էական: Այս երկու գերազանցապէս անհրաժեշտ ու էական լեզուներուն անտեղեկ մէկը ինչպէս պիտի կրնանք իր կոչումին ծառայել պէտք եղած կերպով: Այս խօսքերով չեմ ուզեր բնաւ յանձնար ինչպէս այն եկեղեցականները, որոնք ժամանակին այս զոյգ մը լեզուներէն հիմնովին չեն սորորած: Դաւ լիցի հեռու ինչ այս գաղափարը: Բայց, թո՛ղ

իրենց անձնական փորձառութենէն օգտուելով՝ զոնք ասէն ետքը իրենց քահանայացու աշակերտներուն սովորեցնեն ինչ որ իրենց չէին սովորեցուցած աստեղծութիւնը՝ պտուղն է, իսկ միւսը՝ անուորդը: — առանց պտուղի կրնայ ապրիլ մէկը, բայց ո՛չ երբեք առանց անուորդի: Այս փոխաբերական գեղեցիկ խօսքը թո՛ղ միշտ մեր ականջը ըլլայ: Ահլի մարդ ժամանակ ունի լատիններէնը ու յունարէնը սովորելու, եթէ փափաքելու ըլլայ աստուածաբանական ու գրական գիտութիւններու խորեղ թափանցելու: Բայց, այն բարի եկեղեցականը, որ պիտի երթայ գաւառի մը անկիւնը իր հոգեւոր հօտը առաջնորդելու և կամ ա՛յն որ մայրաքաղաքին մէջ պիտի կենայ, պէտք է գիտնան մանաւանդ իրենց երկրին լեզուն, — օսմաներէնը, — առանց որուն քայլ մը իսկ չեն կրնար առնել: Նոյն կարեւորը, և յետո՛յ օգտակարը, այն է կեանքի խելացութիւնը:

ԱՐԴԵՐ ԵՐԱՋ ԿԸ ՏԵՍԵ Կ. Վ. ԵՍԱՅԵԱՆ

(«Բիւզանդիոն»ի 2715 թիւին մէջ հրատարակուած յօդուածի մը առթիւ գրուած):

Քննադատներուն համբաւաւոր ցեղը դեռ չէ մեռած. ասոր սուղը թո՛ղ չի բռնէ Կ. Վ. Եսայեան: Ողջ են քննադատները և փառք Աստուծոյ, որք որ կ'աճին, կը բազմանան. կան որ ամէն բան գեղեցիկ կը տեսնեն և սքանչելի, հիանալի է կը գոչեն. ասոնց ըսելիք չունինք, հերքէ է որ ծերուկ աքաղաղի մը նման չի բացաքաղչեն զաղիք աղբիւսի մը վրայ: Կան որ յանձն ի ձեռքին միշտ կ'որոտան իրենց ճամբուն վրայ ամէն բան կ'ընկերտեն, կ'ստեղծեն. է՛հ, այլապէս կ'անցնի միթէ երբ Զինացի մը ձայն բարձրացնէ, պոռայ նոյն իսկ ջոշուրուն ուշադրութիւնը գրաւելու անտիճան: սակայն ես չեմ ախառտի որ քննադատներու բազմութիւնը իրարու հետ հաշտեցնեմ. ասոր իմ կարողութենէն վեր է. բազմաւոր սեպելու ետք ինքզինքնիս եթէ վրանին ջանի մը փնտրու մնայ:

Ամէն մարդ գիտէ որ Կ. Վ. Եսայեան միշտ չերազեր, մանաւանդ երբ կը քննադատէ. այդ պահուն արթուն է, աշխուշ է սրամիտ: Ըսողներ գտնուին ինքեւս որ իր գրիչը երբեմն կը խայթէ. ինչ ընենք, քննադատներուն օրական մեղքն է այդ. անոնց հետ չատ մօտէն չփոխուելէ. արդէն հոս քննադատութիւն չեմ ընեմ և չեմ ալ յաւակնիր քննադատներուն: Ինչպէս որ քննադատութեան չի վերաբերիր: Սկզբնական մեղաց վրայ խօսելու ատեն, արդեօք երբեք կը տեսնել Կ. Վ. Եսայեան. լսեցէ թէ ինչի կը գրէ. «Սկզբնական մեղքի վարդապետութիւնը Ս. Օգոստինոսի հետարած է, հիմնուելով Պօղոս առաքնալի առ Հռոմէական գրած թուղ»:

Թին (Ե. 17—18) վրայ: Մեր եկեղեցին սկզբնական մեղքի վարդապետութիւնը բնաւ չունի, և եթէ անոր մասին քաղաքիար յայտնող կայ և ընդունողներ ալ կան, ցոյն եկեղեցական վարդապետութեանց մէջ անոր մասին յիշատակութիւն չկայ. աշխի առջեւ բեր և կարդա՛: Մկրտութեան խորհուրդին առջեւ աղօթքները և պիտի համոզուիս: Պ. Եսայեան, դու ալ կարդա՛: Ե պիտի համոզուիս թէ Մաշտոցը Մկրտութեան երկու արդիւնքներն ալ յայտնապէս կը ցուցնէ. 1. Սկզբնական մեղքին ջնջումը և 2. Մեր աստուածային որդեգրութիւնը: Երկրորդ արդիւնքին վրայ չենք խօսիր հիմա. առաջինը կը բռնէ:

«... զփրկութիւն և զքարոզման գլխաւոր վերաբեր շնորհներ մեզ կ'ենթադրուէ թիւն:» — «Անօրէնութեամբ յղացաւ և ի մեզ ծնաւ զիս մայր իմ:» (Սաղմ. Թ. 1): «... զի սղորմեացի ըստ մեծի ողորմութեան իւրում, և սրժանի արագեց զսա լուսոց: ման վերաբեր ծննդեան և զգնաւոր անապականութեան:» — «Ընկալ, մարդաւոր Տէր, զընծայեալս Բեղ զերթախոյս գայս, և ստեղծ ամենա զաւարտեալս յայտնայնս ննջութեանց հաւատաւորութիւն, և արժանաւորեալ զսա ի ձեռն սուրբ աւազանին լուսնալ զհնութիւն մեղաց իւրոց և նորոգել լուսով շնորհաց քոց, և և:» — «... վասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց, և իշխանոյ ուղորմութեան Աստուծոյ ի վերայ երթալս յիս:» — «Եւ շնորհալ զի շուրս այս՝ յոր վերջի սա այժմ, լիցի մեղաց թողութիւն, ընդունելութիւն հոգեւոր սրբոյ, յորդեղութեան շնորհս Երկնաւոր Հօրք: Ե ի ժառանգութիւն Երկնից արքայութեանդ: Որպէս զի սրբեալ ի մեղաց ի հաճոյս կտա մաց քոց կեցցէ յայս աշխարհս, և զմանս դերձեալ բարիք ընկալցի:» — «Մերկեալ ի սկսնէ զհնութիւն մեղաց, և նորոգեալ ի կեանս նորոյ:» — «Հաւատով ինդրեմ մկրտի, և մաքրել ի մեղաց, և աղաթիլ ի դիւսց, և ծառայել Աստուծոյ:» — «Ինեալ արեւմալ Գրիգորի ի ծառայութեան մեղաց, ընդունի զազատութիւն որդեգրութեան Հօրն Երկնաւորի՝ լինել ժառանգակցի Գրիգորիս ի տաւար Հոգեւոր Սրբոյ:» — «... Որ և աղաթեցի զմաւայս քո, որեցեք և արդարացեցիք, և ետուր ամա որդեգրութեան պատիւն:» (Մաշտոց, ապ. Վիկտուս):

Ահա է սկզբնական մեղքը՝ պիտի գոչէ Եսայեան յալթական: Ներքեցէ՛ք, քաղաքիարին կը նայինք և ոչ թէ ցոսկ բառերուն ինչ անսակ մեղք կրնայ ունենալ: Եսայեան Ս. Եկեղեցին կ'աղօթէ որ անոր մեղքը ջնջուի, անիկայ մեղքն մը մաքրուի. արդ ջնջուլու ուրիշ մեղք չկայ, բայց եթէ այն հին մեղքը, այսինքն մեր հաւածնող մեղքը որ մեզի կը իրաւացուի և ասոր բոլոր քրիստոնէից հետ մեղք ալ կ'ըսենք սկզբնական մեղքը:

Կ. Վ. Եսայեան հայրախօսական մեծ հմտութիւն կը ցուցնէ երբ կ'ըսէ թէ սկզբնական մեղքը:

Բէմի.— Տէրիսատե՛ի էմաք
վերկրսինն, պազն սենկնիք թապրդ ա-
տա օրտուղը կրպի, պո սէնէ տէ գր-
մէն մահուպ վէ գըսմէն նազո սո-
րէ՛ծ լլլէ իսթիհոպ օրունահաղը հագ-
ընտա պիր շայեա տէվերուն խեբէթ.
պո սէպէպէն պազը մի քլլէֆիին վէ
սահալը էմաք, վերկրէրկին թէն-
տիէսինն ինէնիք իր մէքաէ օրտրդ.
արընա ըծծըյա հասըլ օլմուշ վէ հալ-

